ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մարտի 2020 թվականի թիվ 7- Ա

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է

- Հաստատել 2020 թվականի մարտի 17-ի ավագանու թիվ 2 նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1) ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)
2) ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)
3) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)
4) ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ : (ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)
5) «ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)
6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)
7) ՄԱՐԶՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)
8) ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԱԿԻ ՄԱՂԱՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ :(ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)
9) ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԱՀԻՏ ՌԱՖԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ:(ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)
10) «ԵՐԱՋԱՆՔԻ ՏՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ:(ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)
11) ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ :(ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Որոշմանը քվեարկեցին *Կողմ՝ 6 հոգի* *Դեմ՝ 0 հոգի* *Ձեռնպահ՝ 0 հոգի*

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մարտի 2020 թվականի թիվ 8- Ա

ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով

համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Տափերական համայնքի տարեկան աշխատանքային պլանը համաձայն հավելվածի:

Որոշմանը քվեարկեցին *Կողմ՝ 6 հոգի* *Դեմ՝ 0 հոգի* *Ձեռնպահ՝ 0 հոգի*

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մարտի 2020 թվականի թիվ 9- Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 2-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացի Նորիկ Բաբկենի Գրիգորյանի (ծնված՝ 02.01.1976 թ., անձնագիր AS0474228) դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ Արարատի մարզի Տափերական համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 0.32211 հա (կադաստրային ծածկագրեր՝ 03-093-0306-001,03-093-0307-0001-ից) գյուղատնտեսական վարելահողը կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով (մեկ քառակուսի մետրը 201.75 դրամով) ուղղակի վաճառքի կարգով օտարել ՀՀ քաղաքացի Նորիկ Բաբկենի Գրիգորյանին (ծնված՝ 02.01.1976թ. անձնագիր AS0474228) գոյություն ունեցող անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝ 03-093-0235-0009, 03-093-0234-0010, 03-093-0234-0011, 03-093-0233-0001, 03-093-0233-0002, 03-093-0251-0001, 03-093-0251-0002, 03-093-0251-0003) ընդլայնման նպատակով:
2. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշման 1-ին կետով սահմանված հողամասի օտարման հետ կապված համապատասխան գործողություններ:

Որոշմանը քվեարկեցին *Կողմ՝ 6 հոգի* *Դեմ՝ 0 հոգի* *Ձեռնպահ՝ 0 հոգի*

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մարտի 2020 թվականի թիվ 10-Ա

ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով և 82-րդ հոդվածի 2-րդ կետով

համայնքի ավագանին որոշում է .

Հաստատել Տափերական համայնքի 2020-2024թթ. Հնգամյա զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի:

Որոշմանը քվեարկեցին Կողմ՝6 հոգի Դեմ՝0 հոգի Չեռնպահ 0 հոգի

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

Հավելված 1
ՏԱՓԵՐԱԿԱՆՀԱՄԱՅՆՔԻԱՎԱԳԱՆՈՒ
17.03.2020թ. ԹԻՎ10-Ա ՈՐՈՇՄԱՆ

Աղյուսակ 4. Համայնքի 2020-24թթ. ՀԶԾ-ում ներառելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագիրն առաջարկողը	Ծրագրի մոտավոր արժեքը, ֆինանսավորման աղբյուրը,հազ. դրամ
1	Համայնքի գլխավոր հատակագիծ	Համայնքապետ	7000.0
2	Աղետների ռիսկերի կառավարում	Համայնքապետ	21000.0
3	Նոր թաղամասի գազաֆիկացում	Համայնքապետ	10000.0
4	Գյուղի ճանապահների կոպիճապատում և հարթեցում	Համայնքապետ	6000.0
5	Դաշտամիջյան ճանապարհների կոպիճապատում և հարթեցում	Համայնքապետ	6000.0
6	Մանկապարտեզի 2-րդ մասնաշենքի վերանորոգում	Համայնքապետ	30000.0
7	Փողոցների Արտաքին լուսավորության ցանցի կառուցում	Համայնքապետ	25000
8	Մանկական Խաղահրապարակի կառուցում	Համայնքապետ	4000
9	Մանկապարտեզի բակի հիմնանորոգում	Համայնքապետ	5000
10	Համայնքապետարանի 1-ին հարկի վերանորոգում	Համայնքապետ	14000.0
11	Մշակույթի տան վերանորոգում	Համայնքապետ	24000.0

12	Մարզահրապարակի վերանորոգում	Համայնքապետ	8000.0
13	Մշակույթի տան տարածքի ցանկապատում	Համայնքապետ	1500.0
14	Շահումյան փողոցի շարունակության ասֆալտապատում	Համայնքապետ	30000.0
15	Մարզադաշտի վերանորոգում,ցանկապատում	Համայնքապետ	10000.0
16	Մշակույթի տան հրապարակի և շատրվանի հիմնանորոգում	Համայնքապետ	10000.0
17	Գյուղի հրապարակի վերանորոգում	Համայնքապետ	1000.0
18	Կանգառներ	Համայնքապետ	500.0
19	Գերեզմանատան ցանկապատի կառուցում	Համայնքապետ	3000.0

Աղյուսակ 6. Համայնքի 2021-2024թթ. ֆինանսապես ապահովված ընդհանուր և ոլորտային ծրագրերի ամփոփագիր

Հազար դրամ

հ/հ	Ծրագրի անվանումը	Չափի միավորը	Ծրագրի քանակական ծավալը	Ծրագրի արժեքը	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
					2020	2021	2022	2023	2024	Համայնքի բյուջե	Դոնոր կազմակերպություն	Պետբյուջե
1.	Համայնքի գլխավոր հատակագիծ	Հատ	1	7.000		7.000						7.000
2	Աղետների ռիսկերի կառավարման միջոցառումներ			21000								21000
3	Նոր թաղամասի գազաֆիկացում	Գծամետր	1000	10000	10000					5000		5000
4	Գյուղի ճանապարհների կոպիճապատում և հարթեցում	կմ	10	6000	1200	1200	1200	1200	1200	3000	3000	
5	Դաշտամիջյան ճանապարհների կոպիճապատում և հարթեցում	կմ	15	6000	1200	1200	1200	1200	1200	3000	3000	
6	Մանկապարտեզի 2-րդ մասնաշենքի վերանորոգում			30000		30000				15000	15000	
7	Փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցում	կմ	7	25000	25000					13000		12000
8	Մանկապարտեզի բակի հիմնանորոգում			5000		1000	2000	2000		2000	3000	

9	Մանկական խաղահրապարակի կառուցում			4000						2000		2000
10	Համայնքապետարանի 1-ին հարկի վերանորոգում			14000			5000	5000	4000	5000	9000	
11	Մշակույթի տան վերանորոգում			24000	3000	4000	10000	10000		12000		12000
12	Մարզահրապարակի վերանորոգում			8000		8000				4000	4000	
13	Մշակույթի տան տարածքի ցանկապատում			1500		1500				1500		
14	Շահումյան փողոցի շարունակության ասֆալտապատում			30000		30000				15000		15000
15	Մարզադաշտի վերանորոգում, ցանկապատում			10000			10000			5000		5000
16	Մշակույթի տան հրապարակի և շատրվանի հիմնանորոգում			10000		2000	4000	4000		5000		5000
17	Գյուղի հրապարակի վերանորոգում			1000		1000				1000		
18	Կանգառներ			500	500					500		
19	Գերեզմանատների ցանկապատի կառուցում			3000			1500	1500			3000	

ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<17>> մարտի 2020 թվականի թիվ 11- Ա

ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, <<Հիմնադրամների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով , <<Տեղական ինքնակառավարման մասին>> 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

համայնքի ավագանին որոշում է

1. Հիմնադրել «ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»:
2. Հաստատել «ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ համաձայն հավելվածի:
3. «ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ժամանակավորապես գործադիր տնօրեն նշանակել Մուշեղ Հայրիկի Ղազարյանին:

Որոշմանը քվեարկեցին Կողմ՝6 հոգի Դեմ՝0 հոգի Չեռնպահ՝0 հոգի

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

Հավելված 1
ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
17.03.2020թ. ԹԻՎ 11-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2020

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք), «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք), Հայաստանի Հանրապետության Միջազգային պայմանագրերի, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն և հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ:

1.2. Հիմնադրամի անվանումն է՝

հայերեն լրիվ՝	ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
հայերեն կրճատ՝	ՏՀԶՀ
ռուսերեն լրիվ՝	Фонд развития общинаТаперакан
ռուսերեն կրճատ՝	ФРОТ
անգլերեն լրիվ՝	Development Fund of Taperakan Community
անգլերեն կրճատ՝	DFTC

1.3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝
0628, ՀՀ Արարատի մարզ, համայնք Տափերական, փողոց Շահումյան, շենք 5:

1.4. Հիմնադրամի հիմնադիրն է՝

- ՀՀ Արարատի Տափերական համայնքը

1.5. Հիմնադրամի շահառուներն են.

- ՀՀ Արարատի մարզի Տափերական համայնքը.
  Գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերները
- Տափերական համայնքի տարածքում ժամանակավորապես բնակվող, ժամկետային զինվորական ծառայությունը կատարող, իրենց աշխատանքային պարտականությունները կատարող յուրաքանչյուր ոք.
- Համայնքի տարածքում գործունեություն ծավալող բոլոր կազմակերպությունները անկախ սեփականության ձևից:
- Սոցիալապես անապահով ընտանիքների անդամները, ծերերը, հաշմանդամները, թոշակառուները, ուսանողները, ծնողազուրկ երեխաները, զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամները:

1.6. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում իր ստեղծած Հիմնադրամի պարտավորությունների համար:

1.7. Յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ Հիմնադրամը http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում պարտավոր է հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին: Հաշվետվությունը հրապարակելուց հետո 30 օրվա ընթացքում, այդ մասին գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

1.8. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Հիմնադրամը կարող է ունենալ իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով և խորհրդանիշի պատկերով), դրոշմներ և բլանկներ, խորհրդանիշ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ ռեկվիզիտներ: Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

1.9. Հիմնադրամն ինքնուրույն է որոշում իր գործունեության ռազմավարական ծրագրերը:

1.10. Հիմնադրամը, որպես սեփականություն, կարող է ունենալ առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու լինել այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.11. Հիմնադրամը իր կանոնադրությանը համապատասխան, սեփականատիրոջ իրավունքով, իրականացնում է իր ունեցվածքի տնօրինումը, օգտագործումը և տիրապետումը:

1.12. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և նրանից դուրս կարող է ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, որոնք գործում են Հիմնադրամի անունից՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններին համապատասխան:

1.13. Հիմնադրամը իր պարտավորություններով պատասխանատվություն է կրում այն գույքով, որի վրա օրենքով կարող է բռնագանձում տարածվել:

1.14. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.15. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

1.16. Հիմնադրամն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության իրավունք:

1.17. Հիմնադրամը օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարում և ներկայացնում է հաշվապահական և վիճակագրական հաշվետվություն:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.1. Հիմնադրամի հիմնական նպատակներն են.

- Աջակցել ՀՀ Արարատի մարզի Տափերական համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերին.
- Նպաստել Տափերական համայնքի բնակչության կյանքի որակի և եկամտի մակարդակի բարձրանալուն.
- Ապահովել գյուղացիական տնտեսություններին որակյալ և մատչելի գյուղմեխանիզացիայի ծառայությունների մատուցում.
- Նպաստել հողօգտագործման արդյունավետության բարձրացմանը և ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրմանը.
- Նպաստել գյուղատնտեսական խորհրդատվության տրամադրմանը և բուժանյութերի մատակարարմանը՝ վաճառքին.

- Նպաստել բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության ընդլայնմանը.
- Նպաստել Տափերական համայնքի բնապահպանական վիճակի բարելավմանը, արդյունավետ աղբահանության կազմակերպմանը
- Աջակցել համայնքային ենթակառուցվածքների զարգացմանը.
- Նպաստել Տափերական համայնքում զբոսաշրջության, ձեռներեցության, փոքր և միջին բիզնեսի զարգացմանը.
- Աջակցել սոցիալապես անապահով ընտանիքներին, ծերերին, հաշմանդամներին, թոշակառուներին, ուսանողներին, ծնողազուրկ երեխաներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին:
- Աջակցել Տափերական համայնքի տնտեսության, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների զարգացմանը.

2.2. Հիմնադրամի խնդիրներն են.

- Ֆինանսական, նյութական և այլ միջոցների ներգրավումը և կուտակումը Հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացման համար:
- Տափերական համայնքի արդիական խնդիրների լուծման և համայնքի զարգացման նպատակ հետապնդող նախաձեռնությունների խթանումը:
- Համագործակցությունը պետական և համայնքային կառավարման մարմինների, պետական, համայնքային, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների, հասարակության և գործարար հանրույթի, օտարերկրյա քաղաքացիների հետ, նրանց հնարավորությունների համախմբումը Հիմնադրամի կանոնադրական նպատակի իրականացման համար:
- Հիմնադրամի կանոնադրական նպատակներին համապատասխան և կանոնադրությամբ սահմանված ոլորտներում ծրագրերի մշակումը և իրականացումը:
- Մասնակցությունը պետական, համայնքային և այլ ծրագրերին Հիմնադրամի կանոնադրական նպատակին համապատասխանող և կանոնադրությամբ սահմանված ոլորտներում:
- Բարեգործական ձեռնարկների և այլ միջոցառումների կազմակերպումը և անցկացումը:
- Տափերական համայնքի արդիական խնդիրների լուծման և համայնքի զարգացման նպատակ հետապնդող նախաձեռնությունների խթանումը.

2.3. Հիմնադրամը կարող է իրականացնել օրենքով չարգելված, կանոնադրությամբ սահմանված ցանկացած տնտեսական գործունեություն: Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար ստեղծվել է Հիմնադրամը և համապատասխանում է այդ նպատակներին:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Հիմնադրամը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Հիմնադրամը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Հիմնադրամը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

2.4. Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար Հիմնադրամը՝

- համագործակցում է համանման այլ կազմակերպությունների հետ (այդ թվում օտարերկրյա).
- համագործակցում է պետական և հասարակական կազմակերպությունների հետ:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Հիմնադրամն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

1) անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին.
2) հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ.
3) կատարել կանոնադրության փոփոխություններ.
4) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.
5) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.
6) ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից.
7) վերակազմակերպվել.
8) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

3.2. Հիմնադրամը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:

3.3. Հիմնադրամը պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքին և այլ օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան.
2) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.
3) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ.
4) իրականացնել օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ պարտականություններ:

3.4. Սույն կանոնադրության 5.4.-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված անձանց, ինչպես նաև օրենքով լիազորված իրավասու պետական մարմինների պահանջով Հիմնադրամը պարտավոր է հնգօրյա ժամկետում նրանց ընձեռել կանոնադրության, կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ ծանոթանալու հնարավորություն: Հիմնադրամը պարտավոր է այդ անձանց պահանջով տրամադրել նրան կանոնադրության պատճենը: Վճարը, որը գանձվում է կանոնադրության պատճենը տրամադրելու համար, չի կարող դրա պատրաստման ծախսերից ավելի մեծ լինել: Օրենքով լիազորված իրավասու պետական մարմիններին նշված փաստաթղթերը տրամադրվում են անվճար:

3.5. Հիմնադրամին օգնություն ցուցաբերող անձինք (այդ թվում՝ Հիմնադրամի հիմնադիրը) իրավունք ունեն.

ա) մասնակցել Հիմնադրամի գործունեության բոլոր ուղղություններին,
բ) Հիմնադրամի կառավարման մարմինների կողմից, ինչպես նաև կնքված պայմանագրերով սահմանված պայմաններով Հիմնադրամի խնդիրներին ու նպատակներին համապատասխան ստանալ, խորհրդատվական, փորձագիտական, միջնորդական, գիտատեխնիկական և այլ օգնություն,
գ) Հիմնադրամի միջոցով ստեղծել և զարգացնել երկկողմ և բազմակողմ կապեր,
դ) Հիմնադրամի կողմից նրա իրավունքների, իրավական և տնտեսական հնարավորությունների շրջանակներում օգտվել սեփական շահերի պաշտպանությունից,

ե) ցանկացած ժամանակ դադարեցնել իրենց մասնակցությունը Հիմնադրամի աշխատանքներին:

3.6. Հիմնադրամը վարում է իր գործունեությանը աջակցող անձանց ռեեստր:

3.7. Հիմնադրամին աջակցող անձինք պարտավոր են.

ա) Հիմնադրամի ծրագրերի և միջոցառումների իրականացման ժամանակ գործել Հիմնադրամի կանոնադրության պահանջներին խիստ համապատասխան,

բ) չտարածել Հիմնադրամի գործունեության մասին գաղտնի տեղեկություններ,

գ) զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնաս պատճառել Հիմնադրամին:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

4.1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ),
- Հիմնադրամի գործադիր տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

4.2. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է: Հիմնադրամի Խորհուրդը բաղկացած է 7 (յոթ) անդամից: Հիմնադրամի Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք: Խորհրդի անդամները չեն կարող լինել Հիմնադրամի այլ մարմնի անդամ: Հիմնադրամի Խորհրդի առաջին կազմի, որը ձևավորվում է սույն կանոնադրության 4.3 կետով սահմանված կարգով, անդամների լիազորություններն սկսվում են Հիմնադրամի պետական գրանցումից հետո եռամսյա ժամկետը լրանալու հաջորդող օրվանից, իսկ եթե նշանակվել են Հիմնադրամի Խորհրդի բոլոր անդամները, ապա դրա հաջորդող օրվանից: Հետագայում Խորհուրդը ձևավորվում կամ համալրվում է սույն կանոնադրության 4.3 կետով սահմանված կարգով:

4.3. Հիմնադրամի Խորհրդի կազմավորման կարգը.

- Խորհրդի թվով 1 (մեկ) անդամ նշանակվում է ի պաշտոնե՝ ՀՀ Արարատի մարզի Տափերական համայնքի ղեկավարը (միաժամանակ հանդիսանում է խորհրդի նախագահը) - Խորհրդի թվով 3 (երեք) անդամներ նշանակվում են Համայնքի ավագանու որոշմամբ համայնքի բնակիչներից, 3 (երեք) տարի ժամկետով:

-Խորհրդի 3 (երեք) անդամները նշանակվում են Տափերական համայնքի ավագանու որոշմամբ՝ Տափերական համայնքի ավագանու կազմից, 3 (երեք) տարի ժամկետով:

4.4. Հիմնադրամի Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) առաջարկություններ ներկայացնել Հիմնադրամի Խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

2) նախապատրաստելու և Հիմնադրամի Խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր.

3) ստանալու տեղեկություններ Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ.

4) ստանալու իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

4.5. Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է.

1. Հիմնադրամի խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա.
2. նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում, խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով.
3. եթե դադարել են Հիմնադրամի խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելի լիազորությունները.

4. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.
5. նրան առաջադրած անձի որոշմամբ, եթե նրան առաջադրել է Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը.
6. նրա մահվան դեպքում.
7. եթե նա նշանակվել է ի պաշտոնե՝ նրա զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ նրա զբաղեցրած պաշտոնի վերացման դեպքում.

Հիմնադրամի Խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով, ոչ ուշ քան Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

Հիմնադրամի Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Հիմնադրամի տնօրենը տեղեկացնում է Խորհրդի տվյալ անդամին նշանակած մարմնին, Հիմնադրամի մարմիններին:

4.6. Եթե Խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում երկամսյա ժամկետում Խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը երկամսյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ:

Ժամանակավոր խորհուրդը պարտավոր է քայլեր ձեռնարկել օրենքով սահմանված կարգով Խորհրդի կազմի համալրման համար:

Ժամանակավոր խորհուրդն իրավասու է՝

ա) իրականացնելու Հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ օրենքով Խորհրդին վերապահված լիազորություններ.

բ) դիմելու դատարան՝ Հիմնադրամը լուծարելու համար:

Եթե ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, Խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ Հիմնադրամը լուծարելու համար:

4.7. Հիմնադրամի Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) Հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը.
2) Հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.
3) Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.
4) Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.
5) Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
6) Հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.
7) Հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.
8) Հիմնադրամի Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.
9) Հիմնադրամի Խորհրդի նախագահի, տնօրենի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.
10) Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը.

11) Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը:
12) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.
13) Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.
14) տարին մեկ անգամ տնօրենի հաշվետվությունների լսումը.
15) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.
16) Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.
17) Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
18) Հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը.
19) Հիմնադրամի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց աշխատանքի վարձատրության մասին որոշումների ընդունումը,
20) օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

4.8. Հիմնադրամի Խորհրդի նիստերը և որոշումները՝

1. Հիմնադրամի Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հիմնադրամի Խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ Հիմնադրամի Խորհրդի նախագահի կողմից: Հիմնադրամի Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Հիմնադրամի Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ Հիմնադրամի Խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Հիմնադրամի Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

Եթե նշված ժամկետում Հիմնադրամի Խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստը կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

2. Հիմնադրամի Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին: Հիմնադրամի Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: Հիմնադրամի Խորհրդի նիստերում Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

Հիմնադրամի տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև Հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Հիմնադրամի վերակազմակերպման դեպքում, Խորհուրդը Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշումն ընդունում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

3. Հիմնադրամի մարմինների նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են տվյալ նիստին մասնակցող Հիմնադրամի մարմնի բոլոր անդամները:

4. Արձանագրության մեջ նշվում են՝

- նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը եւ վայրը.
- նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց (այդ թվում՝ կառավարման մարմնի անդամների) քանակը.
- նիստին մասնակցած անձանց (այդ թվում՝ կառավարման մարմնի անդամների) քանակը, անունները՝ նշելով հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամի կարգավիճակը կամ հիմնադրամում զբաղեցրած պաշտոնը.

- նիստի օրակարգը:

Արձանագրությունը պետք է պարունակի նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները:

5. Հիմնադրամի մարմինների նիստերի արձանագրությունները կազմվում են հայերենով: Դրանք կարող են կազմվել նաեւ օտար լեզվով: Տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին:

Եթե Հիմնադրամի Խորհրդի նիստում քննարկվում է Հիմնադրամի Խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Հիմնադրամի Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

4.9. Հիմնադրամի Խորհրդի նախագահը.

1. Ի պաշտոնե հանդիսանում է Տափերական համայնքի ղեկավարը.

2. Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Հիմնադրամի Խորհրդի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կարող է կազմավորել Խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր, սույն կանոնադրության 4.7. կետի «13» ենթակետով նախատեսված, հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման (ստուգում, ուսումնասիրում և այլն) իրականացման և սույն կանոնադրության 4.7 կետի «3», «4», «11», «12» ենթակետերով նախատեսված հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Խորհրդին եզրակացություններ (տեղեկանքներ) ներկայացնելու համար.

բ) գումարում է Հիմնադրամի Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

դ) Հիմնադրամի Խորհրդի քննարկմանն է ներկայացնում Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ, սույն կանոնադրության 4.5 կետի «2» ենթակետով նախատեսված դեպքերում:

Հիմնադրամի Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, Հիմնադրամի Խորհրդի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:

4.10. Հիմնադրամի տնօրենը.

Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի տնօրենը:

Հիմնադրամի տնօրենի իրավասությանն են պատկանում Հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը:

Հիմնադրամի տնօրենը կազմակերպում է Հիմնադրամի Խորհրդի որոշումների կատարումը:

Տնօրենին ընտրում և պաշտոնից ազատում է Հիմնադրամի Խորհուրդը: Նրա պաշտոնում առաջին անգամ նշանակում կարող է կատարել նաև հիմնադիրը:

Հիմնադրամի տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է Հիմնադրամի Խորհրդի նախագահը կամ Հիմնադրամի Խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

Հիմնադրամի տնօրենը այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Հիմնադրամի Խորհրդի համաձայնությամբ:

Հիմնադրամի Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ օրենքով, սույն կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

4.11. Հիմնադրամի տնօրենի իրավասությունները՝

1) տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից.

2) ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

3) գործում է առանց լիազորագրի.

4) տալիս է լիազորագրեր.

5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

6) բանկերում բացում է Հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

7) Հիմնադրամի Խորհրդի հաստատման է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

9) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին.

10) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

5.1. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, կարող է ունենալ առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

5.2. Հիմնադրամի սկզբնական միջոցներն են հիմնադրի կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և (կամ) ֆինանսական միջոցները:

Հիմնադրի կողմից Հիմնադրամին հանձնած գույքը Հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով:

5.3. Հիմնադրամի հիմնադրի և այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց ներդրումները (նվիրաբերությունները, նվիրատվությունները և այլն) կարող են կատարվել ինչպես դրամական և գույքային տեսքով (այդ թվում՝ սարքավորումներ, շենքեր, շինություններ, մտավոր սեփականության նկատմամբ իրավունքներ), այնպես էլ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի տեսքով: Այս դեպքում կատարվում է ներդրվող գույքի կամ օգտագործման իրավունքի դրամական գնահատում, որի մեծությունը նշվում է համապատասխան անձի (ներդրողի) ու Հիմնադրամի միջև կնքվող պայմանագրում:

5.4. Հիմնադրամի գույքի և միջոցների ձևավորման աղբյուր կարող են լինել՝

ա) հիմնադրի ներդրումները.

բ) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.

գ) դրամական մուտքերը պետական բյուջեից.

դ) դրամաշնորհները.

ե) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

զ) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում),

է) օրենքով չարգելված այլ միջոցները:

5.5. Հիմնադրամի սեփականությունն է համարվում իր կողմից ստեղծված, ձեռքբերված կամ այլ քաղաքացիների, կազմակերպությունների կողմից հանձնված ունեցվածքը, ներառյալ՝ դրամական միջոցները, բաժնետոմսերը, այլ արժեթղթերը և մտավոր սեփականության նկատմամբ իրավունքները:

5.6. Հիմնադրամի ամբողջ ունեցվածքը, տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները համարվում են նրա սեփականությունը և չեն կարող որպես շահույթ հատկացվել Հիմնադրամի հիմնադրին: Հիմնադրամը իրականացնում է իր ունեցվածքի տնօրինումը, օգտագործումը և տիրապետումը միայն այդ գույքի նշանակությանը համապատասխան և միայն Հիմնադրամի կանոնադրական խնդիրների և նպատակների իրականացման համար:

5.7. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և Հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Հիմնադրամի հիմնադիրը, Հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողները հանդիսանում են կանոնադրությամբ նախատեսված շահառուներ:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

6.1. Կանոնադրությունում փոփոխություններ մտցնել կարող են ինչպես Հիմնադրամի հիմնադիրը, այնպես էլ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Կանոնադրության այդ փոփոխությունները չեն կարող վերաբերել Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին.

6.2. Եթե կանոնադրության պահպանումը ամփոփոխ ձևով կարող է առաջացնել այնպիսի հետևանքներ, որոնք հնարավոր չէր կանխատեսել Հիմնադրամն ստեղծելիս, կամ կանոնադրությունը չի փոփոխում նրա իրավասությունն ունեցող մարմինը, կամ փոփոխությունները պետք է վերաբերվեն Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին, ապա փոփոխություններ կատարելու իրավունքն իրականացնում է դատարանը՝ Հիմնադրամի մարմինների կամ հիմնադիրների կամ օրենքի համաձայն ստեղծված հոգաբարձուների ժամանակավոր խորհրդի դիմումի հիման վրա:

7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով:

Հիմնադրամների միաձուլում է համարվում նոր հիմնադրամի ստեղծումը՝ նրան երկու կամ ավելի միաձուլվող հիմնադրամների իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ և միաձուլվող հիմնադրամների դադարմամբ:

Հիմնադրամների միացում է համարվում մեկ կամ մի քանի հիմնադրամների գործունեության դադարումը՝ դրանց իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ այլ հիմնադրամի:

Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է հիմնադրի որոշմամբ: Հիմնադրամի վերակազմակերպումը կարող է կատարվել նաև հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հիմնադրամի այլ վերակազմակերպումներ չեն թույլատրվում:

7.2. Լուծարումը Հիմնադրամի գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

7.3. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

Հիմնադրամը կարող է լուծարվել եթե՝

ա) Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.

բ) իր գործունեությամբ Հիմնադրամը շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.

գ) հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների փոփոխություն.

դ) Հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.

ե) Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.

զ) Հիմնադրամն ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ.

է) Հիմնադրամը կարող է լուծարվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

7.4. Հիմնադրամի լուծարման կարգը:

1. Դատարանի կողմից Հիմնադրամի լուծարման մասին որոշում ընդունելուց հետո Խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և օրենսգրքի և օրենքի համաձայն սահմանում է լուծարման կարգը ու ժամկետները.

2. Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Հիմնադրամի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող Հիմնադրամի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

3. Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

4. Լուծարման հանձնաժողովն htt://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն է զետեղում Հիմնադրամի լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետների մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է Հիմնադրամի լուծարման գործընթացի սկիզբ:

5. Լուծարման հանձնաժողովն իրականացնում է գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին Հիմնադրամի լուծարման մասին:

6. Լուծարման ընթացքում Հիմնադրամն իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ՝ միայն իր պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

7. Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող Հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին:

8. Միջանկյալ լուծարման հաշվեկշիռը հաստատում է Հիմնադրամի Խորհուրդը:

9. Միջանկյալ լուծարման հաշվեկշռի հաստատվելուց հետո եթե լուծարվող Հիմնադրամի ունեցած դրամական միջոցներն անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, լուծարման հանձնաժողովը, օրենքով սահմանված կարգով, հրապարակային սակարկություններով իրականացնում է Հիմնադրամի գույքի վաճառքը:

10. Լուծարման հանձնաժողովը լուծարվող Հիմնադրամի պարտատերերին վճարումներ է կատարում օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և միջանկյալ լուծարման հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման պահից:

11. Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, Հիմնադրամի մնացած գույքն ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

12. Հիմնադրամի գույքի ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում է Հիմնադրամի Խորհրդի հաստատմանը: Լուծարման հանձնաժողովը Հիմնադրամի Խորհրդի հաստատված լուծարման հաշվեկշիռը ներկայացնում է դատարանի հաստատմանը:

13. Լուծարման հանձնաժողովը հաստատված լուծարման հաշվեկշիռն օրենքով սահմանված մյուս փաստաթղթերի հետ ներկայացնում է իրավաբանական անձանց պետական ռեգիստր Հիմնադրամի լուծարման պետական գրանցում կատարելու համար:

14. Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ պետական գրանցման պահից:

15. Հիմնադրամի Խորհրդի կողմից սույն կետի առաջին, ութերորդ և տասներկուերորդ ենթակետերով սահմանված իր լիազորությունները երկամսյա ժամկետում (համապատասխանաբար դատարանի կողմից որոշման ընդունման, լուծարման հանձնաժողովի կողմից լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռի ներկայացման պահից) չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը Հիմնադրամի լուծարման հետ կապված լիազորությունների իրականացման նպատակով երկամսյա ժամկետում նշանակում է ժամանակավոր խորհուրդ:

ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մարտի 2020 թվականի թիվ 12- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13 հոդվածի 10-րդ կետով համայնքի ավագանին որոշում է.

համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիա ստանալու՝ Տափերական համայնքի փողոցների գազաֆիկացման հայտը համաձայն հավելվածի:

Որոշմանը քվեարկեցին Կողմ՝6 հոգի Դեմ՝0 հոգի Ձեռնպահ՝0 հոգի

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

Հավելված 1
ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
17.03.2020թ. ԹԻՎ 12-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅՏ

Տափերական համայնքում տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն

Ծրագրի անվանումը	Տափերական համայնքի Թումանյան,Հրաչյա Ներսիսյան,Շ.Ազնավուրի,Մոնթե Մելքոնյան,Պ.Սևակ,Սպանդարյան,Թ.Կրպեյան փողոցների գազաֆիկացում:
Մարզ	Արարատի մարզ:
Համայնքը /համայնքները	Տափերական:
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	Երևանից-40կմ,մարզկենտրոնից-6 կմ:
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	4060 մարդ:
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի	Համայնքը սահմանամերձ չէ:
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը, - գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը, - ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը, - լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ	Ջրամատակարարում և ջրահեռացում-<<Վեոլիա Ջուր>>ՓԲԸ, էլեկտրազազամատակարարում-<<Արարատի ԳԳՄ>>,ոռոգում-<<Արտաշատ ՋՕԸ>> , լուսավորություն-<<ՀԷՑ>>ՓԲԸ Արաքս մասնաճյուղ: Ներհամայնքային փողոցների լուսավորությունը իրականացվում է համայնքապետարանի կողմից: - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվում են համայնքի բնակչության 100%-ը: Ջրամատակարարման տևողությունը-6 ժ: - գազամատակարարման համակարգից օգտվում են համայնքի բնակչության 85%-ը: - ոռոգման համակարգից օգտվում են բնակչության 100%-ը: Համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը նույնպես 100%: -համայնքում լուսավորության համակարգի առկայությամբ փողոցներ 60%: Փողոցները լուսավորվում են և LED և էներգախնայող տեսակի լուսատուներով:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Համայնքի գերակշիռ խնդիրներից մեկը՝ դա համայնքի փողոցների գազաֆիկացումն է:Ծրագիրը բարելավելու է բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը և ստեղծելու է նախապայմաններ նորաստեղծ թաղամասերում բնակչության

	աճին և համայնքի զարգացմանը:Այս փողոցները գազաֆիկացված չեն,այս պահին առկա են շուրջ 21 տնային տնտեսություններ և ևս շուրջ 95 ստեղծվող տնային տնտեսությունների կստեղծվի օգտվելու հնարավորություն:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	Լուծելով համայնքի գազաֆիկացման խնդիրը՝ կապահովենք և կնպաստենք բնակիչների կյանքի որակի բարձրացմանը:Գազաֆիկացնելով փողոցները,հնարավորինս մեծ չափով ազդեցություն կունենանք համայնքի բնակիչների ապրելակերպի վրա:Ծրագրի իրականացման արդյունքում համայնքում կավելանա գազաֆիկացված տնտեսությունների թիվը,որին կավելանա ևս 1000 գծամետր գազախողովակ:Արդյունքում կբարձրացնենք բնակչության սոցիալ-տնտեսական կենսամակարդակը:
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	Ծրագրի շրջանակներում նախատեսվող գործողությունները՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթի ձեռքբերում,նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննություն :Կազմակերպել մրցույթ,կնքել պայմանագիր մրցույթում հաղթող ճանաչված շինարարական կազմակերպության հետ:Վերահսկել շինարարական աշխատանքները: Հենասյուների հիմքերի փոսերի քանդում: Հենասյուների տեղադրում բետոնային հիմքով: 57մմ տրամագծով գազախողովակաշարի անցկացում մոտ 1000 մ երկարությամբ:
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության զույքի	Ծրագրի ավարտման արդյունքում կավելանա համայնքի գազով ապահովված տնտեսությունների թիվը:Ինչպես նաև կստեղծվի նպաստավոր պայմաններ բնակարանաշինության համար:Ծրագրի իրականացման արդյունքում համայնքային սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների `ճանապարհների ,արժեքը կավելանա ծրագրի արժեքի չափով:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Համայնքի Թումանյան,Հրաչյա Ներսիսյան,Շ.Ազնավուրի,Մոնթե Մելքոնյան,Պ.Սևակ,Սպանդարյան,Թ.Կրպեյան փողոցների գազաֆիկացման արդյունքում համայնքում գազաֆիկացված տնտեսությունների թիվը կավելանա 21-ով և կլուծվի հետագայում շուրջ 95 տնտեսության գազաֆիկացման խնդիրը:Որն էլ իր հերթին կբարելավի համայնքի սոցիալ-տնտեսական մակարդակի բարձրացմանը:
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	Շինարարական աշխատանքների ընթացքում կստեղծվի մոտավորապես 7 ժամանակավոր աշխատատեղ:Ծրագրի ավարտից հետո համայնքում հիմնական աշխատատեղեր չեն ստեղծվելու:
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	Նախորդ տարվա բյուջեն՝ հազ. ՀՀ դրամ. | Պլանը | Փաստացին | Տոկոսը Ընդամենը՝ համայնքի բյուջեի | | | 102.3%

	եկամուտները այդ թվում՝	110653.1	113256.7	
	-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	99850.4	113256.7	113.4%
	- Սեփական եկամուտներ	38965.0	40901.2	105%
	-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	10802.7	7331.08	67.8%
	Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝	110653.1	107042.8	96.7%
	- Վարչական բյուջեի ծախսեր	99850.4	107042.8	107.2%
	-Ֆոնդային բյուջեի ծախսեր	10802.7	7331.08	67.8%
	Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից՝	10802.7	7331.08	67.8%
	- փողոցային լուսավորություն	9194.0	6029.0	65.5%
	- ջրամատակարարում	406.0	400.02	98.52%
	- վարչական սարքավորումներ	802.76	566.0	70.5%
	-			
	-			

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն	Հազ.ՀՀ դրամ.	Պլանը
	Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում այդ թվում՝	131464.8
	- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	111257.3
	- սեփական եկամուտներ	40141.0
	- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	20207.5
	Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝	111257.3
	- Վարչական բյուջեի ծախսեր	111257.3
	-Ֆոնդային բյուջեի ծախսեր	20207.5
	Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից՝	20207.5
	-Փողոցների լուսավորում	10207.5
	-Գազաֆիկացում	5000.0
	-Կոպիճապատում	5000.0
	-	
	-	

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման	Հազ.ՀՀ դրամ Դոտացիա-71943.300 ՀՀ դրամ Վարչական՝ Կառավարման մարմնի պահպանման ծախսեր-27200.0

դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	Հասարակական կազմակերպություններին աջակցություն-300.0 Մշակույթի տան ծախսեր-10800.0 Առողջապահություն-200.0 Հանրակրթական ուսուցում-200.0 Կանաչ տարածքների պահպանում-250.0 Աղբահանում և սանիտարական մաքրում-14600.0 Փողոցների լուսավորում-1800.0 Նախադպրոցական կրթություն-35000.0 Հանգիստ,մշակույթ,կրոն-2000.0 Սոց.հատուկ արտոնություններ-5500.0 Կարիքավոր ընտ.բարձրագույն կրթություն-1000.0 Հեռուստատեսային ծառայություններ-200.0 Ճանապարհների վերանորոգում և պահպանում-1000.0 Պահուստային միջոցներ-11207.3
Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝ - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ, - նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ, - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ, - հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ, - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ, ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ	10,000,000 ՀՀ դրամ (100%) - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 350,000 ՀՀ դրամ, - նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 150,000 ՀՀ դրամ, - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 300,000 ՀՀ դրամ, - հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 200,000 ՀՀ դրամ,
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	5,000,000 ՀՀ դրամ (50%)
Այլ ներդրողներ	Առկա չեն:

Ծրագրի իրականացման տևողությունը	Տևողությունը 20.12.2020թ.
Ծրագրի ծախսերը	Ծրագրի ընդհանուր ծախսը կազմում է 10,000,000 ՀՀ դրամ,ըստ տեխնիկական բնութագրի:
Ամսաթիվ	30.01.2020

Այլ տեղեկություններ ծրագրի մասին (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Համայնքի տնտեսական պատասխանատու
Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը
Հակոբյան Զավեն-093-95-79-78,taperakan@yandex.ru

Համայնքի ղեկավար _____Կարեն Խաչատրյան_ _____
(անունը, ազգանունը)

Կ. Տ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մարտի 2020 թվականի թիվ 13- Ա

ՄԱՐԶՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստան Հանրապետության վարչապետի 85-Ա 10.02.2014թ. որոշմամբ.

համայնքի ավագանին որոշում է

Տափերական համայնքից Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի անդամ առաջադրել

- Մանե Արմենի Հովհաննիսյանին -Տափերական համայնքի բնակիչ :

Որոշմանը քվեարկեցին Կողմ՝6 հոգի Դեմ՝0 հոգի Չեռնպահ՝0 հոգի

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մարտի 2020 թվականի թիվ 14- Ա

ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԱԿԻ ՄԱՂԱՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հաշվի առնելով Գրիգոր Արմենակի Մաղաքյանի դիմումը .

համայնքի ավագանին որոշում է

Մերժել Գրիգոր Արմենակի Մաղաքյանի Տափերական համայնքի Շահումյան 3 հասցեում գտնվող Տափերական համայնքի սեփականություն հանդիսացող գյուղապետարանի շենքը սեփականության իրավունքով իրեն տրամադրելու մասին դիմումը, հարցը լուծել դատական կարգով:

Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 6 հոգի Դեմ՝ 0 հոգի Ձեռնպահ՝ 0 հոգի

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մարտի 2020 թվականի թիվ 15- Ա

ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԱՀԴԱ ՌԱՖԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հաշվի առնելով 11.02.2020թ. Անահդա Ռաֆիկի Հայրապետյանի դիմումը .

համայնքի ավագանին որոշում է

Մերժել Անահդա Ռաֆիկի Հայրապետյանի Տափերական համայնքի Կենտրոնական 8 հասցեում գտնվող Տափերական համայնքի փոստի շենքի սեփականության իրավունքով իրեն տրամադրելու վերաբերյալ դիմումը, հարցը լուծել դատական կարգով:

Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 6 հոգի Դեմ՝ 0 հոգի Ձեռնպահ՝ 0 հոգի

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<17>> մարտի 2020 թվականի թիվ 16- Ա

<<ԵՐԱԶԱՆՔԻ ՏՈՒՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ հոդվածով, հիմք ընդունելով Տափերական համայնքի ղեկավար Կարեն Խաչատրյանի առաջարկը և <<Երազանքի տուն>> հասարակական կասպակերպության տնօրեն Լիանա Մեհրաբյանի խնդրանքը.

համայնքի ավագանին որոշում է

<<Երազանքի տուն>> հասարակական կազմակերպությանը նվիրատվությամբ տրամադրել 450.000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 6 հոգի Դեմ՝ 0 հոգի Ձեռնպահ՝ 0 հոգի

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մարտի 2020 թվականի թիվ 17- Ա

ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետությունում ծառայող ժամկետային զինծառայողների հարազատների խնդրանքը .

համայնքի ավագանին որոշում է

Հավանություն տալ Տափերական համայնքի ղեկավար Կարեն Խաչատրյանի առաջարկին. կազմակերպել ժամկետային զինծառայողների հարազատների այցելությունը դեպի Արցախի Հանրապետություն:

Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 6 հոգի Դեմ՝ 0 հոգի Չեռնպահ՝ 0 հոգի

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*